

**ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Մանվել Թարվերդյանը մասնակցեց «Ազգային գրադարանային շաբաթ» ծրագրի միջոցառումների ամփոփիչ երեկոյին**

23.04.2014



Ավարտվեց ավանդույթ դարձած Ազգային գրադարանային շաբաթի միջոցառումները, որը կայացավ ապրիլի 14-22-ը: Շաբաթվա կարգախոսն էր. «Ես կարդում եմ, իսկ դու...»:

Մարզային գրադարանի տնօրեն Ռ. Լևոնյանը մասնակիցներին ներկայացրեց շաբաթ ծրագիրը և իրականացվելիք միջոցառումները:

Ապրիլի 16-ին տեղի ունեցավ «Իր հոգնած տարիքն ու ինքը» խորագիրը կրող մեծ բանաստեղծ Համո Սահյանի ծննդյան 100-ամյակին նվիրված գրական-գեղարվեստական ցերեկույթը: Տեսաֆիլմից հնչեց Սահյանի ձայնը, որից հետո սպասարկման բաժնի գրադարանավար Կ. Ալեքսանյանի և Արփիի համայնքի դպրոցականների շնորհիվ ներկայացվեց Սահյանի պոեզիան: Բանաստեղծի երգերից կատարեց գրադարանի աշխատող Քրիստինե Հովսեփյանը, Մանվել Սահրադյանի նվագակցությամբ:

Միջոցառմանը ներկա էին փոխմարզպետ՝ Ս. Թարվերդյանը և կրթության, մշակույթի գլխավոր մասնագետ Ա. Հովհաննիսյանը:

Փոխմարզպետը շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին և մի դրվագ պատմեց Սահյանի հետ հանդիպումից:

Իր հետաքրքրությունն ունեցավ մանկական բաժնի կողմից կազմակերպված Հայրապետ Հայրապետյանի ծննդյան 140-ամյակին նվիրված գրական-գեղարվեստական ցերեկույթը: Մանկագրի կյանքը և գրական գործունեությունը ներկայացրեց բաժնի վարիչ Ջ. Մարգարյանը, իսկ ընթերցողները սիրով կարդացին և արտասանեցին Հայրապետյանի ստեղծագործություններից:

Շատ ներդաշնակ անցավ Սուրբ գատիկի տոնակատարությանը նվիրված գրական-գեղարվեստական ցերեկույթը: Միջոցառմանը մասնակցում էին տարբեր տարիքի երեխաներ: Մանկական բաժնի գրադարանավար Տ. Հայրապետյանը շատ գեղեցիկ կերպով ցուցադրեց Ջատիկին բնորոշ ուտեստներ և ձեռքի աշխատանքներ: Մասնակիցները մեծ բանականություն ստացան ազգային տոնին նվիրված միջոցառումից:

«Ապրիլի 22-ին ամփոփվեց Ազգային գրադարանային շաբաթին նվիրված միջոցառումները»,- տեղեկացնում է գրադարանի տնօրեն Ռոզա Լևոնյանը: